h.)

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 558-Ա որոշում առ 26.06.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի հունիսի 27-30-ը**

5. Գործուղման վայրը՝ **Իտալիայի Հանրապետություն (Հռոմ)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**256,791**	**256,791**
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար (Հռոմ, Internacional Palace Hotel, EUR)	170.3	
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	77,496.7	
	Գիշերների քանակը (27-28, 28-29, 29-30 - հունիս)	3	
	Ընդամենը (դրամ)	**232,490**	**232,490**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Հռոմ, EUR)	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	63,051	
	Օրերի քանակը (27, 28, 29, 30 - հունիս 25թ.)	4	
	Ընդամենը (դրամ)	**252,204**	**252,204**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր/ՊՊՍ սրահ/	**10,000**	**10,000**
Ընդամենը ծախսեր (դրամ)		**751,485**	**751,485**
Նախահաշվարկով վճարված (դրամ)		**422,844**	**422,844**
Ընդամենը վճարման ենթակա (դրամ)՝ որից		**328,641**	**328,641**
Ավիատոմսի գումարը (դրամ)		**256,791**	**256,791**
վճարման ենթակա (դրամ)		**71,850**	**71,850**

***25.06.2025թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեքը 1 EUR 447.17

***01.07.2025թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեքը 1 EUR 455.06

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՌ ՆԱՍԻԲՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հունիսի 27-ից 30-ը Իտալիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Գևորգ Պապոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իտալիայի Հանրապետություն, ք. Հռոմ, 2025թ. հունիսի 27-30

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ/FAO)

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ՊԳԿ Խորհրդի 44-րդ նստաշրջանին և նախարարական բարձր մակարդակի միջոցառմանը, որն ուղղված էր դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խնդիրների քննարկմանը:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկվել են պարենային անվտանգության ամրապնդման, կլիմայական փոփոխությունների ազդեցության մեղմացման և գյուղատնտեսական նորարարական մեթոդների կիրառման հնարավորությունները: Ընդգծվել է նաև գիտահետազոտական և տեխնոլոգիական զարգացման խթանման անհրաժեշտությունը՝ ի նպաստ գյուղատնտեսության կայուն զարգացման: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների բարձրացրած խնդիրներին, ներառյալ շուկաներ հասանելիության սահմանափակումները, տարանցիկ փոխադրումների բարդությունները և լոգիստիկ

ծախսերի բարձր մակարդակը, որոնք զգալիորեն նվազեցնում են մրցունակությունը: Քննարկվել են նաև ազգային մակարդակում կայուն գյուղատնտեսական քաղաքականության մշակման ուղիները, բազմակողմ հարթակներում համագործակցության ընդլայնման հնարավորությունները և գործող մոտեցումների կիրառման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարը ելույթ է ունեցել նախարարական միջոցառման ժամանակ՝ ներկայացնելով Հայաստանի փորձը, մարտահրավերները և ձեռնարկած քայլերը՝ կապված լեռնային դիրքով, դեպի ծով ելք չունենալու հանգամանքը, ինչպես նաև տարանցիկ ուղիներից ՀՀ մեծ կախվածությունը: Նա մանրամասն ներկայացրել է պետական օժանդակության գործիքակազմը, որը նախատեսված է գյուղատնտեսության ոլորտի արդիականացմանը, արտադրողականության բարձրացմանը և պարենային անվտանգության ապահովմանը: Նախարարն անդրադարձել է նաև փոքր և միջին տնտեսավարողներին ուղղված աջակցության քաղաքականությանը, նորարարական և թվային լուծումների ներդրման խթանմանը և երիտասարդ կադրերի ներգրավմանը: Նա ընդգծել է «Խաղաղության խաչմերուկ» տարածաշրջանային նախաձեռնության կարևորությունը, որը միտված է ենթակառուցվածքների համապարփակ զարգացմանը, միջազգային կապերի խորացմանը և հարևան երկրների հետ փոխադարձ շահերի հիման վրա համագործակցության ընդլայնմանը:

Համաժողովի շրջանակում նախարար Գևորգ Պապոյանը հանդիպել է ՄԱԿ-ի ՊԳԿ գլխավոր տնօրեն Քու Դոնգյուի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ և ՊԳԿ միջև համագործակցության ընթացքը և դրա ընդլայնման հեռանկարները: Նախարարը նշել է, որ ՀՀ կառավարությունը համակարգված քայլերով նպաստում է պարենային անվտանգության ամրապնդմանը, գյուղատնտեսության արդիականացմանը և նորարարական լուծումների կիրառմանը: Կողմերը պայմանավորվել են արագացնել ՊԳԿ-ի պաշտոնական ներկայացուցիչ նշանակելու գործընթացը Երևանում, քննարկել են թվային գյուղատնտեսության ոլորտում համագործակցության ակտիվացման ուղիները, ինչպես նաև մտքեր են փոխանակել

2026 թվականին Հայաստանում նախատեսվող COP17 միջոցառման կազմակերպման վերաբերյալ: Զրուցակիցները անդրադարձել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

ՊԳԿ համաժողովի շրջանակում նախարարը հանդիպում է ունեցել նաև Վրաստանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի նախարար Դավիթ Սոնգուլաշվիլիի հետ: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել Վրաստանի տարածքով հայկական բրենդիով (Armenian Brandy) բեռնված փոխադրամիջոցների արագ և անխոչընդոտ տարանցման ապահովման հնարավորություններին: Կողմերը քննարկել են նաև Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական օրակարգի ընդլայնման և ոլորտային համագործակցության խորացման հեռանկարները:

Նախարարական քննարկմանը մասնակցել են նաև մի շարք այլ երկրների գյուղատնտեսության նախարարներ և բարձր մակարդակի պատվիրակություններ, ինչը բարձր մակարդակ է հաղորդել քննարկումներին՝ ստեղծելով միջազգային գործընկերության և փորձի փոխանակման արդյունավետ հարթակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՊԳԿ Խորհրդի կողմից ընդունվել են մի շարք ռազմավարական փաստաթղթեր, որոնք ուղղված են կլիմայի փոփոխության համատեքստում գյուղատնտեսության հարմարվողականության բարձրացմանը, պարենային համակարգերի կայունության ապահովմանը և դեպի ծով ելք չունեցող երկրների խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության ձևավորմանը: Մասնակից պետությունները պայմանավորվել են խորացնել համագործակցությունը պարենային համակարգերի հզորացման, տեղական արտադրության խթանման, ռիսկերի կառավարման և գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվել կանանց և երիտասարդների ներգրավման կարևորությանը գյուղատնտեսության զարգացման գործընթացներում: Վերահաստատվել է միջազգային գործընկերների միջև համագործակցության խորացման անհրաժեշտությունը՝ մասնավորապես տեխնիկական աջակցության, գիտելիքի

փոխանակման, կարողությունների զարգացման և համատեղ ծրագրերի իրականացման շրջանակում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

03.07.25թ.